# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ν 122-Ա**

<<26>> սեպտեմբերի 2024 թվականի          քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-003-0026- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 0.06330 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված <<Օրթոֆոտոհատակագծի (օրթոլուսանկարի) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգի>> 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող 08-003-0026- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.06330 հեկտար հողամասը Մարալիկ քաղաքի էլետրոնայի կադաստրային հերթապահ քարտեզում թույլ տրված անճշտության հետևանքով սեփականության իրավունքի սուբյեկտ է գրանցվել քաղաքացի /հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 03/09/2024թ. N Կ-03092024-08-0189 որոշում/, որի նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ծեռքբերումը հաստատող փաստաթղթեր, էլեկտրոնային կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտությունը ուղղելու նպատակով.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, 08-003-0026- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.06330 հեկտար մակերեսով հողամասը, որի վրա առկա են ինքնակամ շինություններ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

3. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասերի հատակագիծը կցվում են որոշմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ՝ 11 | Դեմ՝ 0 | Ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | ________ | ________ | ________ |
| Մ. ԱՍԼԱՆՅԱՆ | ________ | ________ | ________ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<26>> սեպտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ